Հաստատվել է ՀՖՀՀ հոգաբարձուների խորհրդի կողմից 2024թ. հուլիսի 16–ին: /Le présent règlement a été validé par le CA de l'UFAR le 16 juillet, 2024.

Կանոնակարգ

2025-2026 ուսպարվա Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) Licence/ Բակալավրիատ ընդունելության

Règlement

d'admission 2025-2026 en cycle de Licence

de l'Université Française en Arménie (UFAR)

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION
01002296

Սույն կանոնակարգը հաստատված է Հայաստանում ֆրանսիական համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ համաձայն Ֆրանսիայի և Հայաստանի միջև համագործակցության համապատասխան համաձայնագրերի, համալսարանի կանոնադրության, ֆրանսիական համալսարանների հետ կնքած համագործակցության համաձայնագրերի և ՀՀ օրենսդրության պահանջների:

Սույնով անվավեր է ճանաչվում «2024-2025 ուստարվա Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) Licence/ Բակալավրիատ ընդունելության կանոնակարգը» :

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայաստանում ֆրանսիական համալսարան (այսուհետ՝ ՀՖՀՀ) ընդունելությունը կատարվում է ֆրանսիական և հայկական Licence/բակալավրիատ ու Master/մագիստրատուրա կրթակարգերում՝ համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից համալսարանին տրված կրթական գործունեության լիցենզիայով սահմանված մասնագիտությունների ու տեղերի:

1.2. ՀՖՀՀ Licence/բակալավրիատ կարող են դիմել Հայաստանում կամ արտերկրում առնվազն միջնակարգ լրիվ կրթության վկայական ունեցող ՀՀ և այլ երկրների քաղաքացիները: Արտերկրում միջնակարգ լրիվ կրթության վկայական ունեցող դիմորդները պետք է

Le présent Règlement est validé par le Conseil d'Administration de l'Université Française en Arménie, en conformité avec les accords de coopération concernés entre la France et l'Arménie, les Statuts de l'Université, les conventions de coopération avec les universités françaises partenaires et les dispositions de la législation de la République d'Arménie.

Le présent annule et remplace le " Règlement d'admission 2024-2025 en cycle de Licence de l'Université Française en Arménie (UFAR)"

1. Dispositions générales

1.1. L'admission à l'Université Française en Arménie (ci-après UFAR) se fait dans les systèmes français et arménien du Cycle de Licence / Բակալավրիատ et du Cycle de Master / Մագիստրատուրա en fonction des spécialités et des places définies par la licence d'activité éducative délivrée par le Ministère de l'Éducation, de la Science, de la culture et du sport de la République d'Arménie.

1.2. Peuvent poser leur candidature en cycle de Licence/ Բակալավրիատ de l'UFAR les citoyens de la République d'Arménie et tout citoyen de nationalité étrangère ayant au minimum réalisé le cursus complet des études secondaires en Arménie ou dans un autre pays. Dans le cas d'un cursus complet des études secondaires à l'étranger, les candidats doivent remplir les conditions d'accès à l'enseignement supérieur du pays où ils ont terminé leurs études secondaires.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

համապատասխանեն տվյալ երկրում ԲՈՒՀ ընդունվելու պահանջներին:

1.3. Համաձայն ՀՀ կառավարության և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սահմանված կարգի՝ ՀՖՀՀ ընդունված արական սեռի ներկայացուցիչները կարող են մասնակցել « Պատիվ ունեմ » ծրագրին:

2. Ընդունելություն Licence / Բակալավրիատ

2.1 Ընդունելության քննությունների և մրցույթի անցկացում

2.1.1. ՀՖՀՀ Licence / բակալավրիատ ընդունելության մրցույթը տեղի է ունենում հետևյալ մասնագիտությունների գծով՝

- Իրավագիտություն
- Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
- Ֆինանսներ՝ բանկային գործ և ապահովագրություն մասնագիտացմամբ
- Կառավարում
- Մարքեթինգ:

2.1.2. « Իրավագիտություն » մասնագիտության գծով ընդունելության քննություններն են՝

- հասարակագիտություն – 100 միավոր
- հայոց լեզու - 80 միավոր:

«Հասարակագիտություն» առարկայից 35, իսկ «Հայոց լեզու» առարկայից 28 միավորի շեմը չհաղթահարած դիմորդները դուրս են մնում ընդունելության մրցույթից՝ բացառությամբ ընդունելության հանձնաժողովի հատուկ

1.3. Selon les modalités déterminées par le Gouvernement de la République d'Arménie et le Ministère arménien de la défense, les étudiants de sexe masculin admis à l'UFAR peuvent participer au programme national « Pativ unem » (J'ai l'honneur).

2. Admission en cycle de Licence/Բակալավրիատ

2.1. Déroulement du concours d'entrée

2.1.1 Le concours d'entrée d'admission en cycle de Licence / Բակալավրիատ de l'UFAR se fait dans les spécialités suivantes :

- Droit
- Informatique
- Finances avec la spécialisation « Banque et assurances »
- Gestion
- Marketing.

2.1.2. Les épreuves pour la spécialité Droit sont :

- Sciences sociales - 100 points
- Langue arménienne - 80 points.

En cas des notes inférieures à 35 points pour l'épreuve de sciences sociales et à 28 points pour l'épreuve de de langue arménienne, retenus comme seuils minimaux pour l'admissibilité, le candidat est exclu du concours, sauf décision spéciale de la Commission d'admission. L'admission n'est pas

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

որոշումների: Անցողիկ շեմը հաղթահարած ուսանողների ընդունելությունն ավտոմատ կերպով չի իրականացվում և պայմանավորված է տվյալ ուսումնական տարվա ընդունելության տեղերի քանակով:

2.1.3. «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության գծով ընդունելության քննություններն են՝

- մաթեմատիկա - 120 միավոր
- օտար լեզու - 60 միավոր

«Մաթեմատիկա» առարկայի քննությունից 48, իսկ «Օտար լեզու» առարկայից 21 միավորի շեմը չհաղթահարած դիմորդները դուրս են մնում ընդունելության մրցույթից՝ բացառությամբ ընդունելության հանձնաժողովի հատուկ որոշումների: Անցողիկ շեմը հաղթահարած ուսանողների ընդունելությունն ավտոմատ կերպով չի իրականացվում և պայմանավորված է տվյալ ուսումնական տարվա ընդունելության տեղերի քանակով:

2.1.4. ***«Կառավարում», «Ֆինանսներ» և «Մարքեթինգ» (ԿՖՄ) մասնագիտությունների գծով ընդունելության քննություններն են՝***

- մաթեմատիկա - 100 միավոր
- հայոց լեզու կամ օտար լեզու - 80 միավոր

«Մաթեմատիկա» առարկայից 35, իսկ «Հայոց լեզու» կամ «Օտար լեզու» առարկաներից 28 միավորի շեմը

automatique pour les candidats ayant franchi les seuils minimaux, mais se fait en fonction des places allouées pour l'année universitaire.

2.1.3. ***Les épreuves pour la spécialité Informatique sont :***

- Mathématiques - 120 points
- Langue étrangère - 60 points

En cas des notes inférieures à 48 points pour l'épreuve de mathématiques, et à 21 points pour l'épreuve de langue étrangère retenus comme seuils minimaux pour l'admissibilité, le candidat est exclu du concours sauf décision spéciale de la Commission d'admission. L'admission n'est pas automatique pour les candidats ayant franchi les seuils minimaux, mais se fait en fonction des places allouées pour l'année universitaire.

2.1.4. ***Les épreuves pour les spécialités de Gestion, de Finances et de Marketing (GFM) sont :***

- Mathématiques - 100 points
- Langue arménienne ou Langue étrangère - 80 points

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

չհաղթահարած դիմորդները դուրս են մնում ընդունելության մրցույթից՝ բացառությամբ ընդունելության հանձնաժողովի հատուկ որոշումների: Անցողիկ շեմը հաղթահարած ուսանողների ընդունելությունն ավտոմատ կերպով չի իրականացվում և պայմանավորված է տվյալ ուսումնական տարվա ընդունելության տեղերի քանակով:

En cas des notes inférieures à 35 points pour l'épreuve de mathématiques, et à 28 points pour l'épreuve de langue étrangère ou de langue arménienne, retenus comme seuils minimaux pour l'admissibilité, le candidat est exclu du concours sauf décision spéciale de la Commission d'admission. L'admission n'est pas automatique pour les candidats ayant franchi les seuils minimaux, mais se fait en fonction des places allouées pour l'année universitaire.

2.1.5. ՀՖՀՀ ընդունելության քննությունները կազմակերպվում են միասնական քննությունների համակարգից անկախ:

2.1.6. Օտար լեզվից քննությունն անցկացվում է «ֆրանսերեն», «անգլերեն» կամ «գերմաներեն» առարկաներից որևէ մեկից՝ դիմորդի ընտրությամբ:

2.1.5 Les épreuves d'admission à l'UFAR sont organisées indépendamment du système des examens centralisés.

2.1.6 L'épreuve de langue étrangère est organisée pour l'une des matières suivantes : « français », « anglais » ou « allemand », au choix du candidat.

2.1.7. Այն դիմորդները, ովքեր ունեն ներոգրյալ վկայականներից որևէ մեկը, ՀՖՀՀ կողմից հաստատվելուց հետո կստանան առավելագույն միավոր օտար լեզվի ընդունելության քննությունից:

2.1.7 Les candidats justifiant des diplômes sous mentionnés se verront attribuer la note maximale à l'épreuve de langue étrangère pour le concours d'entrée, après la validation par l'UFAR.

- ֆրանսերենի իմացության վկայական՝ DELF B1 Tout Public (առնվազն 50 միավոր) կամ DELF Junior B1 (առնվազն 60 միավոր),
- անգլերենի իմացության IELTS Academic (առնվազն 6՝ բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 6), TOEFL (առնվազն 70, չեն ընդունվի այն վկայականները, որտեղ բաղադրիչների մեկի կամ մի քանիսի միավորը ցածր կլինի 17-ից), Cambridge Assessment

- DELF B1 Tout Public (50 points minimum) ou DELF Junior B1 (60 points minimum) ;
- IELTS Academic (au moins 6 points - la note minimale pour chacune des compétences linguistiques 6) TOEFL (au moins 70 points, en cas de note inférieure à 17 points pour 1 ou plusieurs compétences linguistiques, le certificat ne sera pas accepté), Cambridge Assessment English FCE, BEC Vantage,

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ FONDATION 01002296

English FCE, BEC Vantage, BEC Higher, CAE, CPE վկայականներ[1]: TOEFL MyBest Scores միավորը չի ընդունվում:

- գերմաներենի իմացության GOETHE-ZERTIFIKAT B1 (բաղադրիչներից յուրաքանչյուրի նվազագույն միավորը պետք է լինի 60), TELC Deutsch B1 (առնվազն 180 միավոր), DSD 1 քննությունը՝ B1 մակարդակ), DSD I PRO քննությունը՝ B1 մակարդակ, Test DaF (TDN 4) և հնարավորություն ունեն հեշտացված կարգով՝ առանց օտար լեզվի քննության, ընդունվելու ՀՖՀՀ:

Վերոգրյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն/կցվեն գրանցման հայտ ներկայացնելիս:

2.1.8. Հայոց և օտար լեզուների քննություններն անցկացվում են թեստերով, որոնք կազմված են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրերի շրջանակներում:

2.1.9. ***«Կառավարում», «Ֆինանսներ» և «Մարքեթինգ» (ԿՖՄ) մասնագիտությունների գծով*** «Մաթեմատիկա» առարկայից քննության առաջադրանքը պարունակում է հանրակրթական

BEC Higher, CAE, CPE2. Les scores « MyBest Score » de TOEFL ne sont pas acceptés.

- GOETHE-ZERTIFIKAT B1 (la note minimale pour chacune des composantes doit être de 60), TELC Deutsch B1 (180 points minimum), DSD 1 B1 ou DSD I PRO B1, Test DaF (TDN 4) et peuvent prétendre à une intégration facilitée à l'UFAR par la dispense du test de langue étrangère au concours d'entrée.

Les diplômes susmentionnés doivent être présentés/joints lors du dépôt des dossiers.

2.1.8 Les épreuves de langue arménienne et étrangère se font sur la base de tests élaborés dans le cadre des programmes des matières de l'école secondaire validés par le Ministère de l'éducation, des sciences, de la culture et des sports de la République d'Arménie.

2.1.9 ***Pour les spécialités de Gestion, de Finances et de Marketing (GFM)*** l'épreuve de « Mathématiques » comprend des problèmes et exercices tirés des programmes de l'école

[1] IELTS, TOEFL վկայականների վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի երկու տարին:

[2] Les certificats des tests IELTS et TOEFL sont valables pour 2 ans.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

դպրոցի «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների ծրագրերի, ինչպես նաև «Երկրաչափություն» առարկայի «Հարթաչափություն» բաժնի ծրագրի խնդիրներ ու վարժություններ:

secondaire des matières « Mathématiques », « Algèbre », « Algèbre et bases d'analyse mathématique », ainsi que de la partie « Planimétrie » de la matière « Géométrie ».

2.1.10. ***«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության գծով*** «Մաթեմատիկա» առարկայից քննության առաջադրանքը պարունակում է հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկաների ծրագրերի, «Երկրաչափություն» առարկայի «Հարթաչափություն» և «Տարածաչափություն» բաժինների ծրագրի խնդիրներ ու վարժություններ:

2.1.10 **Pour la spécialité Informatique** l'épreuve de « Mathématiques » comprend des problèmes et exercices tirés des programmes de l'école secondaire des matières « Mathématiques », « Algèbre », « Algèbre et bases d'analyse mathématique » et de la matière « Géométrie » (« Planimétrie » et « Géométrie dans l'espace »).

«Կառավարում», «Ֆինանսներ» և «Մարքեթինգ» մասնագիտությունների գծով այն դիմորդները, որոնք հանձնել են SAT թեստը մաթեմատիկայից (Scholastic Aptitude Test) և հավաքել են ՀՖՀՀ-ի կողմից սահմանված միավորը, կարող են թեստի վկայականը ներկայացնել գործերը հանձնելիս: ՀՖՀՀ-ի կողմից հաստատվելուց հետո նրանք մաթեմատիկայի ընդունելության քննությունից կստանան ստորև նշված միավորը :

Les candidats ***des spécialités de Gestion, de Finances et de Marketing (GFM)*** ayant passé les mathématiques du test SAT (Scolastic Aptitude Test) et obtenu la note définie par l'UFAR, peuvent présenter le certificat du test lors du dépôt des dossiers. Après la validation par l'UFAR, les candidats se verront attribuer la note citée ci-après à l'épreuve des mathématiques pour le concours d'entrée.

Les candidats ***des spécialités de Gestion, de Finances et de Marketing (GFM)*** ayant obtenu entre 650-800 points au test SAT, se verront attribuer entre 65 et 80 points sur 100 à l'épreuve des mathématiques

«Կառավարում», «Ֆինանսներ» և «Մարքեթինգ» մասնագիտությունների գծով այն դիմորդները, որոնք SAT թեստի մաթեմատիկայից հավաքել են 650-ից 800 միավոր, մաթեմատիկայի ընդունելության քննությանը կստանան 65 -ից մինչ 80 միավոր 100 հնարավորից: Այսինքն՝ SAT թեստի գնահատականը կբաժանվի 10-ի: Թեստի վկայականի վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի երկու տարին:

pour le concours d'entrée. C'est-à-dire la note du test SAT sera divisée par 10. Les certificats du test SAT sont valables pour 2 ans.

«Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության գծով դիմորդների համար SAT թեստի գնահատականը չի դիտարկվի

Pour la spécialité Informatique la note du test SAT ne sera pas acceptée.

2.1.11. «Հասարակագիտություն» առարկայի քննությունը անցկացվում է թեստով, որը հարցաշար է՝ ճիշտ պատասխանի ընտրությամբ: Թեստի հարցերը կազմված են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված «Հասարակագիտություն» առարկայի ծրագրի շրջանակներում:

2.1.11 L'épreuve de « Sciences sociales » est organisée sous forme de QCM. Les questions du QCM sont élaborées dans le cadre de la matière « Sciences sociales » de l'école secondaire validée par le Ministère de l'Éducation, de la Science, de la culture et du sport de la République d'Arménie.

2.1.12. Ըստ առարկաների քննական թեստերի և առաջադրանքների տարբերակների ընտրությունը իրականացվում է վիճակահանության միջոցով՝ ուսումնական գծով տնօրենի պատասխանատվությամբ:

2.1.12 Le choix des sujets des épreuves du concours d'entrée est réalisé à l'aide d'un tirage au sort, sous la responsabilité de la Directrice des Etudes de l'UFAR.

2.1.13. Ընդունելության քննությունները կարող են կազմակերպվել համակարգչային տեխնիկայի կիրառմամբ:

2.1.14. Ընդունելության քննությունների վերահանձնում չի կազմակերպվում:

2. 2. Ընդունելության քննությունների ընթացքը

2.2.1 Քննության օրը դիմորդները ներկայանում են քննության սկզբից առնվազն 60 րոպե առաջ:

2.2.2. Դիմորդները ՀՖՀՀ-ի մասնաշենք մտնելու և քննության ներկայանալու համար պետք է ունենան անձը հաստատող փաստաթուղթ (անձնագրի կամ նույնականացման քարտի բնօրինակ) և գործերի ընդունման ժամանակ տրված անցաթուղթը (եթե այդպիսին տրամադրվել է): Անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի (եթե այդպիսին տրամադրվել է) բացակայության դեպքում դիմորդի մուտքը քննության արգելվում է:

2.2.3. Բջջային հեռախոսներով (նույնիսկ անջատված վիճակում), տեխնիկական որևէ այլ սարքով, պայուսակներով, տպագիր նյութերով (գիրք, բառարան) և տետրերով մուտքը քննասենյակ արգելվում է: Մաթեմատիկայի քննությանը թույլատրվում է միայն

2.1.13 Les épreuves du concours peuvent être organisées à l'aide des technologies informatiques.

2.1.14 Le concours d'entrée ne donne pas lieu à une session de rattrapage.

2.2. Déroulement du concours d'entrée

2.2.1. Le jour de l'épreuve, les candidats se présentent à l'examen au moins 60 minutes avant le début de l'épreuve.

2.2.2. Au moment d'entrer dans les locaux de l'UFAR pour se présenter à l'examen, les candidats doivent avoir sur eux une pièce d'identité (l'original du passeport ou de la carte d'identité), la convocation reçue lors du dépôt du dossier (si ce document lui a été remis). En cas d'absence de pièce d'identité et de convocation (si ce document lui a été remis), l'entrée du candidat dans la salle d'examen est interdite.

2.2.3. Il est interdit d'entrer dans la salle d'examen avec des téléphones portables même éteints, d'autres appareils électroniques, des sacs, des documents imprimés (dictionnaires, livres) et des cahiers. Durant l'épreuve de

պարզ հաշվիչների օգտագործումը, բարդ բազմաֆունկցիոնալ հաշվիչների օգտագործումն արգելվում է:

2.2.4. Դիմորդը քննասենյակներում զբաղեցնում է քննության մասնակիցների ցուցակի՝ վիճակահանությամբ որոշված իր համարին համապատասխան տեղը:

2.2.5. Քննության սկզբում քննասենյակի պատասխանատուները գրատախտակին նշում են քննության սկզբի և ավարտի ժամը:

2.2.6. Քննության ողջ ընթացքում արգելվում է խոսելը: Բոլոր տեխնիկական բնույթի հարցերով դիմորդները դիմում են հսկիչներին:

2.2.7. Քննաթերթի խոտանման դեպքում այն անմիջապես ոչնչացվում է հսկիչի կողմից:

2.2.8. Քննության անանունությունը ապահովելու նպատակով քննաթերթերի փակվող անկյունը լրացվում է դիմորդի կողմից և փակվում:

2.2.9. Դիմորդը քննասենյակից կարող է դուրս գալ ոչ շուտ, քան քննության սկզբից երեսուն րոպե հետո: Դուրս գալիս դիմորդը հանձնում է աշխատանքը: Քննասենյակից դուրս գալը վերջնական է՝ բացառությամբ դիմորդի առողջական վիճակով

mathématiques, seulement l'utilisation des calculatrices simples est autorisée, l'utilisation des calculatrices multifonctionnelles est interdite.

2.2.4. Dans la salle d'examen le candidat occupe la place correspondant à son numéro dans la liste des participants à l'examen déterminée par un tirage au sort.

2.2.5. Au début de l'examen, les responsables de la salle indiquent sur le tableau les horaires de début et de fin de l'épreuve.

2.2.6. Pendant toute la durée de l'examen, il est interdit de parler. Pour toutes les questions techniques, les candidats doivent s'adresser aux surveillants.

2.2.7. Si une copie est annulée, elle est immédiatement détruite par le surveillant.

2.2.8. Afin de garantir l'anonymat de l'examen l'angle supérieur de la fiche est rempli par le candidat et correctement fermé.

2.2.9. Le candidat ne peut pas sortir de la salle durant les 30 minutes suivant le début de l'examen. Avant de sortir, le candidat doit remettre sa copie. Toute sortie de la salle d'examen est définitive, sauf pour les cas autorisés par le Président de la

պայմանավորված դեպքերի՝ ընդունող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

2.2.10. Ուշացած դիմորդների մուտքը քննասենյակ թույլատրվում է միայն այն դեպքում, եթե քննական հարցերը դեռ չեն բաժանվել:

2.2.11. Քննությանը չներկայացած դիմորդներին տվյալ քննությունը հանձնելու լրացուցիչ հնարավորություն չի տրվում:

2.2.12. Քննության ավարտին յուրաքանչյուր դիմորդ անձամբ հանձնում է իր աշխատանքը հսկիչին և ստորագրում ներկայաթերթիկում: Հսկիչը քննաթերթերը ընդունում է միայն դիմորդի ինքնությունը և քննաթերթերի անանունությունը ստուգելուց հետո:

2.2.13. Դիմորդները պետք է հանձնեն նույնիսկ չլրացրած քննաթերթերը դրանց փակվող անկյունը լրացնելուց հետո:

2.2.14. Քննությունների ժամանակ համալսարանը իրավունք ունի ստուգելու դիմորդների մոտ էլեկտրոնային սարքավորումների առկայությունը՝ այդ նպատակով իր հայեցողությամբ օգտագործելով համապատասխան միջոցներ:

Commission d'admission en fonction de l'état de santé du candidat.

2.2.10. L'entrée des candidats retardataires dans la salle d'examen n'est autorisée que si les sujets n'ont pas encore été distribués.

2.2.11. Les candidats ne s'étant pas présentés à l'examen ne peuvent pas bénéficier d'une possibilité supplémentaire de le repasser.

2.2.12. À la fin de l'examen, chaque candidat remet sa copie personnellement au surveillant et signe dans la liste d'émargement. Le surveillant accepte la copie uniquement après avoir vérifié l'identité du candidat et l'anonymat de la copie.

2.2.13. Les candidats doivent remettre les copies, même blanches, après avoir rempli l'angle supérieur droit.

2.2.14. L'université se réserve le droit de procéder à la détection de matériels électroniques auprès des candidats pendant les épreuves, par tout moyen qu'elle jugera utile.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION
01002296

2.3 *Քննախախտումները և պատժամիջոցները*

2.3.1 Քննասենյակում արգելված որևէ առարկայի կամ փաստաթղթի առկայությունն ու օգտագործումը, դիմորդի կողմից իրեն հատկացված տեղն ինքնակամ փոխելը, ինչպես նաև քննության ընթացքում երրորդ անձին որևէ իր կամ նյութ փոխանցելու, խոսելու և արտագրելու փորձերը համարվում են քննախախտում:

2.3.2 Քննախախտումը արձանագրվում է հսկիչների կողմից: Արձանագրությանը կցվում են քննակեղծիքի փաստացի ապացույցները (եթե այդպիսիք առկա են)՝ սեղմագրեր, ծածկաթերթիկ, ականջակալներ, բջջային հեռախոս և այլն: Արձանագրությունը պետք է ստորագրվի ներկա բոլոր հսկիչների, ինչպես նաև քննախախտում կատարած դիմորդի կողմից: Եթե վերջինս հրաժարվում է այն ստորագրելուց, արձանագրության մեջ նշվում է այդ մասին:

2.3.3 Քննախախտում թույլ տված դիմորդը տվյալ քննությունից ստանում է 0 միավոր և զրկվում այն շարունակելու իրավունքից: Տվյալ դիմորդը այլևս իրավունք չի ունենում մասնակցելու ընդունելության մյուս քննություններին:

2.3.4 Կապույտից բացի, մյուս բոլոր գույների թանաքներով կամ մատիտով լրացված, ինչպես նաև ակնհայտորեն

2.3. Fraudes pendant les examens et sanctions

2.3.1. La détention ou l'utilisation de tout objet ou document interdit en salle d'examen, le changement par le candidat de la place qui lui a été attribuée, ainsi que le fait de parler, de copier d'autres candidats ou de leur transmettre des objets ou des documents sont considérés comme des fraudes.

2.3.2. La fraude est portée par les surveillants sur un procès-verbal (PV). Sont jointes au PV les preuves de la fraude (s'il y en a) : antisèches, écouteurs, téléphones portables ou autres…. Le PV est signé par tous les surveillants présents, ainsi que par le candidat ayant commis la fraude. Si ce dernier refuse de le signer, ce refus est mentionné dans le PV.

2.3.3. Le candidat ayant commis une fraude obtient zéro (0) à cet examen et se voit privé du droit de le continuer. Le concours est alors terminé pour ce candidat.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION
01002296

տարբերակիչ նշաններով (պատկերներ, նկարներ, խորհրդանշաններ, լրացման դաշտերից դուրս առկա հապավումներ, տառեր կամ թվեր, և այլ տարբերակող նշաններ) աչքի ընկնող քննաթերթերը ստուգման և գնահատման ենթակա չեն: Այս դեպքում ևս դիմորդը տվյալ քննությունից ստանում է 0 միավոր:

2.3.4. Les copies remplies avec des stylos de couleur autre que le bleu, ou au crayon, ainsi que comportant des signes distinctifs apparents (images, dessins, symboles, abréviations, lettres, nom, prénom, pseudonyme ou chiffres dans les marges, et autres signes distinctifs) ne peuvent pas faire l'objet de correction ou d'évaluation. L'étudiant se voit alors attribuer la note éliminatoire de 0.

2.4. Քննաթերթերի ստուգումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը

2.4.1 Ընդունելության մրցույթի վերջնական արդյունքներն՝ ըստ ֆակուլտետների, ընդունելության հիմնական և սպասման ցուցակներով հրապարակվում են հուլիսի սկզբին:

2.4.2 Մրցույթի արդյունքում ընդունելության հիմնական ցուցակում ընգրկված դիմորնդերը պետք է մինչև 2025թ. հուլիսի 11-ը վճարեն առաջին կուրսի ուսման վարձի կեսը՝ որպես կանխավճար: Նշված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում դիմորդը համարվում է հրաժարված և կորցնում ընդունելության տեղը:

2.4.3 Սպասման ցուցակից դիմորդների ընդունելությունը հնարավոր է միայն ընդունելության հիմնական ցուցակում ըստ ֆակուլտետների թափուր տեղերի առաջացման դեպքում՝ ցուցակում ընդունելության մրցույթի ընդհանուր միավորների նվազման հերթականությանը համաձայն:

2.4 Correction de la copie, publication des résultats et procédure d'appel.

2.4.1. Les résultats définitifs du concours d'entrée par Faculté, sous forme de listes principales et d'attente seront publiés au début du mois de juillet.

2.4.2. Les candidats inscrits sur les listes principales à l'issue du concours doivent payer la moitié des frais de scolarité de la 1ère année avant le 11 juillet 2025 au titre d'une avance sur les frais d'inscription. Tout non-paiement de la somme mentionnée dans les délais impartis est considéré comme un désistement par le candidat qui perd alors sa place d'admission.

2.4.3. L'admission des candidats inscrits sur les listes d'attente n'est possible qu'en cas de désistement sur les listes principales, par Faculté, et en fonction du classement par ordre décroissant des résultats des candidats.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION
01002296

2.4.4 Իրենց գրավոր աշխատանքները տեսնելու և քննությունների արդյունքները բողոքարկելու համար դիմորդները պետք է նախապես գրանցվեն քննության արդյունքների հրապարակման ժամանակ հայտարարված ժամկետներում: Սահմանված ժամկետներում չգրանցված ուսանողները զրկվում են իրենց գրավոր աշխատանքները տեսնելու և քննությունների արդյունքները բողոքարկելու հնարավորությունից:

2.4.4. Pour pouvoir consulter leurs copies d'examens et faire appel, les candidats doivent préalablement s'inscrire dans les délais annoncés lors de la publication des résultats. En cas de non-respect des délais définis les étudiants sont privés du droit de consulter leurs copies et faire appel.

2.4.5 Դիմորդներն իրենց աշխատանքների գնահատմանը ծանոթանում են ստուգող դասախոսների և ընդունող հանձնաժողովի անդամի ներկայությամբ:

2.4.5. Les candidats prennent connaissance de leurs notes en présence des enseignants évaluateurs et d'un membre de la Commission d'admission.

2.4.6 Քննության գնահատականը ենթակա է վերանայման միայն այն բացառիկ դեպքերում, երբ առկա է ակնհայտ թերի հաշվարկ կամ պատասխանի բացթողում ստուգողի կողմից: Բոլոր այլ դեպքերում քննությունների գնահատականները փոփոխության ենթակա չեն: Գնահատականի փոփոխության համար ստուգողը դիմում-բացատրություն է ներկայացնում ընդունող հանձնաժողովի նախագահին: Վերջինս էլ որոշում է, թե ինչ ընթացք պետք է տրվի դիմումին:

2.4.6. La note de l'épreuve ne peut être modifiée que dans les cas exceptionnels d'erreurs de calcul avérés ou omission d'une réponse par l'évaluateur. Dans tout autre cas, les notes des épreuves ne peuvent pas faire l'objet de modification. Pour modifier une note, l'évaluateur adresse une demande au Président de la Commission d'admission, qui décide de la suite à y donner.

ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION
0100229

2.4.7 Քննական հարցի պատասխանների երկակիության դեպքում հաշվի է առնվում դիմորդի պատասխանը և միավորը հաշվարկվում է դիմորդի օգտին:

2.4.8 Քննաթերթերի վրա պարտադիր է ստուգող դասախոսի անունը, ազգանունը, ստորագրությունը և առկա սխալի վերաբերյալ պարզաբանումը:

2.5 Օտարերկրացի քաղաքացիների ընդունելությունը և ընդունելությունը մրցույթից դուրս

2.5.1 Օտարերկրացի են համարվում այն դիմորդները, ովքեր ստացել են լրիվ միջնակարգ կրթություն արտասահմանում և ներկայացնում են իրենց օտարերկրյա քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ:

2.5.2 Օտարերկյա քաղաքացիների ընդունելությունը ՀՖՀՀ կարող է իրականացվել առանձին մրցույթով : Օտարերկյա քաղաքացիների ընդունելության համար գործում են նույն ժամկետները:

2.5.3 Օտարերկրյա դիմորդները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք առնվազն վերջին 3 տարին սովորել և ավարտել են օտարերկրյա պետությունների հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

2.4.7. En cas d'ambiguïté dans les réponses proposées par le candidat, la réponse retenue par l'évaluateur est celle qui est favorable au candidat ; l'évaluateur en tenant alors compte dans sa notation au profit du candidat.

2.4.8. L'enseignant évaluateur est obligatoirement tenu d'inscrire son nom sur les copies qu'il corrige, ainsi que sa signature et les commentaires concernant les erreurs relevées.

2.5. Admission des citoyens étrangers

2.5.1 Sont considérés comme candidats étrangers les citoyens ayant fait des études secondaires à l'étranger et pouvant prouver leur citoyenneté étrangère.

2.5.2 L'admission des citoyens étrangers à l'UFAR se fait sur la base d'un concours à part ou sur la base du concours général. Les mêmes dates limites s'appliquent à l'admission des citoyens étrangers.

2.5.3 Les candidats étrangers, ainsi que les citoyens de la RA qui ont étudié, au moins au cours des 3 dernières années, et obtenu leur diplôme des établissements d'enseignement secondaire ou professionnel à l'étranger peuvent :

ՀԻՄՆԱԳՐԱՄ
FONDATION
01002296

մասնագիտական ուսումնական հաստատությունները կարող են.

ա) Մասնակցել օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված առանձին մրցույթին: Այս դեպքում դիմորդները «Հայոց լեզու» առարկայից կարող են հանձնել հեշտացված քննություն: Այս մրցույթով ընդունված օտարերկրացի քաղաքացիները ՀՖՀՀ ուսումնառության կրթաթոշակից և ուսումնառության նպաստից կարող են օգտվել 2-րդ կուրսից սկսած:

a. participer au concours spécial organisé pour les citoyens étrangers. Dans ce cas, les candidats passent un examen allégé pour la langue arménienne. Les citoyens étrangers admis par cette voie de concours peuvent prétendre à bénéficier également des places aidées sur critère académique de l'UFAR à partir de la deuxième année.

բ) Մասնակցել ընդհանուր մրցույթին՝ ՀՀ քաղաքացի դիմորդների հետ հանձնելով միևնույն քննությունները: Ընդհանուր մրցույթով ընդունված օտարերկրացի քաղաքացիները ՀՖՀՀ ուսումնառության կրթաթոշակից և ուսումնառության նպաստից կարող են օգտվել 1-ին կուրսից սկսած:

b. participer au concours général en passant les mêmes examens que les citoyens arméniens. Les citoyens étrangers ayant participé au concours général peuvent prétendre à bénéficier des places aidées sur critère académique de l'UFAR à partir de la première année.

2.5.4 Ֆրանսիական ընդհանուր բակալավրիատի, AbiBac, Bachibac, Esabac D.A.E.U. (համալսարանական կրթության թույլտվության դիպլոմ) դիպլոմներ ունեցող դիմորդները 1-ին կուրս ընդունվում են առանց ընդունելության քննություններ հանձնելու՝ մրցույթով նախատեսված սահմանային տեղերից դուրս: Այս պարագայում ՀՖՀՀ ընդունված ուսանողները ՀՖՀՀ ուսումնառության

2.5.4 Les candidats titulaires du Baccalauréat général français, de l'*AbiBac, du Bachibac, de l'Esabac ainsi que du D.A.E.U. (Diplôme d'Accès aux Etudes universitaires)* sont admis en 1ère année, sur titre, hors quota, sans participer au concours d'entrée. Ces candidats peuvent

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

կրթաթոշակից և ուսումնառության նպաստից կարող են օգտվել 2-րդ կուրսից սկսած:

2.5.5 Անկախ ընդունելության ձևաչափից, օտարերկրյա դիմորդների հայերենի իմացության մակարդակը պարզելու համար անցկացվելու է թեստ-հարցազրույց :

2.5.6 AB[3] (Honurs (գերազանցության)) դիպլոմ ունեցող շրջանավարտները կարող են ՀՖՀՀ ընդունվել առանց ընդունելության քննությունների: Այս պարագայում, նրանք առաջադիմության զեղչի կկարողանան հավակնել միայն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

2.6 Փաստաթղթերի հանձնումը և քննությունների կազմակերպումը

2.6.1 Ընդունելության քննությունները և մրցույթը կազմակերպելու նպատակով ՀՖՀՀ ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով: Ի պաշտոնե հանձնաժողովի անդամ են ռեկտորը, պրոռեկտորը, ուսումնական գծով տնօրենը և վարչաֆինանսական տնօրենը: Մյուս անդամները նշանակվում են ռեկտորի կողմից:

prétendre à bénéficier des places aidées sur critère académique de l'UFAR à partir de la 2e année.

2.5.5 Quelles que soient les modalités d'admission, un test-entretien sera réalisé pour situer le niveau d'arménien du candidat étranger.

2.5.6 Les candidats titulaires du diplôme AB[4] (Honurs (excellence)) sont admis à l'UFAR sans participer au concours d'entree. Ces candidats peuvent prétendre à bénéficier des places aidées sur critère académique de l'UFAR à partir de la 2e année.

2.6 Remise des dossiers et organisation du concours

2.6.1 Afin d'organiser le concours d'entrée, une Commission d'admission est créée par le Recteur. Les membres de droit de la commission sont le Recteur, le Vice-recteur la Directrice des Etudes et le Directeur administratif et financier. Les autres membres de la commission sont nommés par le Recteur.

[3] Արարատյան Բակալավրիատ
[4] Araratian Baccalaureate

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

2.6.2 Ընդունող հանձնաժողովը պատասխանատու է ընդունելության մրցույթի հետ կապված վարչական և կազմակերպչական բոլոր աշխատանքների համար:

2.6.3 Licence/բակալավրիատ դիմորդների փաստաթղթերի ընդունման ժամկետն է 2025թ. մարտի 03-ից մայիսի 31-ը:

2.6.4 Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են միջնակարգ ընդհանուր կրթության վկայականի համար քննությունների արդյունքներից անկախ՝ պայմանով, որ մինչև 2025թ. հուլիսի 18-ը ներկայացվեն ստացված միջնակարգ ընդհանուր կրթության վկայականի բնօրինակը և դրա պատճենը:

2.6.5 Յուրաքանչյուր թեկնածու կարող է դիմել միայն մեկ ֆակուլտետի (մասնագիտության) համար: Ընդունելության մրցույթի արդյունքում համալսարանը կարող է սպասման ցուցակի դիմորդներին առաջարկել ընդունվել այլ ֆակուլտետ: Այս կարգը վերաբերում է միայն կառավարման, ֆինանսների և մարքեթինգի ֆակուլտետներին:

2.6.6 Փաստաթղթերը հանձնելիս (առերես կամ առցանց, ինչի մասին նախօրոք կհայտարարվի) դիմորդները լրացնում են համալսարանի կողմից տրամադրվող գրանցման թերթիկը և դրա հետ մեկտեղ

2.6.2 La Commission d'admission est responsable de l'ensemble des tâches administratives et d'organisation liées au concours d'entrée.

2.6.3 Les délais d'admission des dossiers de candidature pour la Licence / Բակալավրիատ sont du 03 mars au 31 mai 2025.

2.6.4 Tous les candidats sont autorisés à déposer leurs dossiers de demande d'admission en Licence indépendamment de leur réussite directe ou non à l'examen d'*Attestat* sous réserve de pouvoir présenter l'original et la copie de leur diplôme avant le 18 juillet 2025.

2.6.5 Chaque candidat dépose un dossier pour une seule Faculté (spécialité). Cependant, à l'issue du concours d'entrée, l'Université peut proposer aux candidats inscrits en liste d'attente une affectation différente de celle qu'ils auraient choisie. Cette modalité ne s'applique qu'aux Facultés de Gestion, de Finance et Marketing.

2.6.6 Lors du dépôt des dossiers (en ligne ou en présentiel, cela sera annoncé à l'avance) les candidats remplissent la fiche d'inscription donnée par l'Université et en même temps ils présentent les documents suivants (en ligne ou en présentiel) :

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

ներակայացնում հետևյալ փաստաթղթերը (առերես կամ առցանց).

- Լրիվ միջնակարգ կրթության վկայականի լուսածրված (սկանավորված) տարբերակը կամ տեղեկանք դպրոցից 12-րդ դասարանում սովորելու վերաբերյալ,
- 3x4 չափի երկու լուսանկար, առցանցի պարագայում՝ JPG ձևաչափով մեկ լուսանկար,
- անձնագրի կամ նույնականացման քարտի լուսածրված (սկանավորված) տարբերակը: Գործերը հանձնելիս ներկայացվում է բնօրինակ
- ՀՀ քաղաքացիների համար կցագրման վկայականը (զինվորական հաշվառման թերթիկը),
- գործերի ընդունման համար ***7500*** դրամ վճարի անդորրագիրը (առցանց գրանցման պարագայում վճարումը կատարվում է առցանց):
- Առկայության դեպքում 2025-2026 ուստարվա ՀՖՀՀ-ի Licence/բակալավրիատ ընդունելության կանոնակարգի 2.1.7 և 2.1.10 կետերով սահմանված դիպլոմների/վկայականների լուսածրված (սկանավորված) տարբերակը

2.6.7 Licence / բակալավրիատի ընդունելության քննությունները կազմակերպվում են 2025թ. հունիսի 16-ից 28-ը:

2.6.8 Ուսումնառության կրթաթոշակների մասին տեղեկատվությունը հասանելի չէ դիմորդներին: Հանրագումարում հավասար չափով միավորներ ստանալու և ուսումնառության կրթաթոշակի

- La version scannée du certificat des études secondaires complètes (*attestat*) ou certificat de l'école attestant que le candidat fait ses études en 12ème année
- 2 photos d'identité 3x4, 1 photo format JPG en cas de dépôt des dossiers en ligne
- La version scannée du passeport ou de la carte d'identité. L'original doit être présenté lors du dépôt de candidature.
- Le certificat d'affiliation militaire (garçons) pour les citoyens de la République d'Arménie
- La quittance de paiement des 7 500 AMD de frais de dossier (en cas de dépôt des dossiers en ligne le paiement se fait en ligne).
- Si disponible, les diplômes/certificats définis par les points 2.1.7 et 2.1.10 du Règlement d'admission 2025-2026 en cycle de Licence (versions scannées).

2.6.7 Les examens d'admission en cycle de Licence /Բակալավրիատ seront organisés du 16 au 28 juin 2025.

2.6.8 Aucune information sur les places aidées n'est communiquée au candidat. Les candidats ayant obtenu les mêmes résultats finaux bénéficient de la même réduction des frais de scolarité.

FONDATION 01002296

հավակնելու պարագայում ուսանողներն օգտվում են նույն չափով զեղչից:

2.6.9 Ֆորս մաժորային պայմաններում ընդունելության ընթացակարգը, ժամկետները և ձևաչափը ենթակա են փոփոխության ՀՖՀՀ ռեկտորի հրամանով:

2.6.9 En cas de force majeure, la procédure, les délais et les modalités du concours d'entrée sont susceptibles d'être modifiées sur ordre du Recteur de l'UFAR.